

Հաստատված է՝

<<ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ

խորհրդի 030 նիստով

խորհրդի նախագահ՝

Բ. Ասատրյան

<< 17 >> 06 2014թ.



<<ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ կողմից տրամադրված վարկերի պայմանների՝

ի օգուտ վարկառուի վերանայման կարգ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգով սահմանվում են «Գառնի Ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ (այսուհետ ՈՒՎԿ) կողմից տրամադրված վարկերի վերանայման պայմանները՝ կապված վարկառուների ժամանակավոր անվճարունակության հետ՝ առաջացած արտաքին ազդակների վատթարացման հետևանքներով, ֆորս մաժորային իրավիճակներով կամ այլ հանգամանքներով:

1.2 Սույն կարգի դրույթները տարածվում են նաև երաշխիքների և վարկային այլ գործիքների վրա:

1.3 Սույն կարգի իմաստով վարկառու է հանդիսանում ՈՒՎԿ-ի հանդեպ 1.2 կետում նշված վարկային պարտավորություն ունեցող տնտեսվարող սուբյեկտը (իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը) և ֆիզիկական անձը:

1.4 Սույն կարգի նպատակն է՝ առավել բարենպաստ սպասարկման պայմաններ ապահովելու միջոցով՝

- պահպանել ու ամրապնդել ՈՒՎԿ-ի և վարկառուի համագործակցությունը,
- խթանել ՈՒՎԿ-ի և վարկառուի համագործակցության հետագա զարգացումը:

1.5 Սույն կարգի իմաստով՝ ֆորս-մաժորային իրավիճակներ են համարվում մակրոտնտեսական վիճակի կտրուկ վատթարացումը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն, որոնք ծագել են վարկը տրամադրելուց հետո, և որը վարկառուն և ՈՒՎԿ-ն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

1.6 Սույն կարգի իմաստով կարող են վերանայվել տրամադրված վարկերի հետևյալ պայմանները.

- Տոկոսադրույթները.
- Տոկոսագումարների վճարման գրաֆիկը.
- Մասնակի մարումների մարման ժամանակացույցը (պարբերականությունը և/կամ մասնակի մարումների գումարների մեծությունը).
- Վերջնական մարման ժամկետները:

2. Տրամադրված վարկերի պայմանների վերանայման պատճառները

ՈւՎԿ-ի կողմից տրամադրված վարկերի պայմանները կարող են վերանայվել սույն կարգի 2.1 և 2.2 կետերում նշված պատճառներով.

2.1 ֆիզիկական անձանց դեպքում՝

2.1.1 հաստիքի կրճատման հետևանքով վարկառուն ազատվել է այն աշխատանքից, որի դիմաց վարձատրությունը հանդիսանում էր ստացված վարկի մարման հիմնական աղբյուր, կամ անցել է այլ աշխատանքի, որի դիմաց վարձատրությունը զգալի (30% և ավելի) ցածր է նախկին աշխատանքի վարձատրությունից,

2.1.2 հաստիքի կրճատման հետևանքով աշխատանքից ազատվելու պատճառով նվազել են վարկառուի կամ վարկառուի ընտանիքի այլ անդամի եկամուտները, որոնք հաշվի են առնվել որպես վարկի մարման աղբյուր,

2.1.3 վարկը արտարժույթով տրամադրված լինելու դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխության /համեմատած վարկի տրամադրման պահին փոխարժեքի հետ/ պատճառով վարկառուի ամսական եկամուտները չեն բավարարում հաշվարկված տոկոսագումարի և վարկի մասնակի մարման գումարի վճարման համար,

2.1.4 վարկի տրամադրումից հետո առաջացած այլ հանգամանքներ, որոնք հնարավոր չէր կանխատեսել:

2.2. Տնտեսվարող սուբյեկտների (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի) դեպքում.

2.2.1 վարկառուի կողմից արտադրվող կամ վաճառվող արտադրանքի գների կտրուկ անկում, իրացման ծավալների կրճատում,

2.2.2 վարկառուի գործընկերների կամ մատակարարների կողմից խախտվել են պայմանագրեր, պայմանավորվածություններ, որոնց պատճառով ապրանքների մատակարարումը /կամ ծառայությունների մատուցումը/ ուշացվել կամ դադարեցվել է,

2.2.3 վարկառուների իրացման ծավալները կտրուկ անկում են ապրել. առևտրային և արտադրական ոլորտում՝ գների բարձրացման, իսկ շինարարական ոլորտում՝ ֆինանսավորման /հիփոթեքային վարկերի տրամադրման/ դադարեցման պատճառով,

2.2.4 վարկն արտարժույթով տրամադրված լինելու դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխության /համեմատած վարկի տրամադրման պահին փոխարժեքի հետ/ պատճառով վարկառուի ամսական եկամուտները չեն բավարարում հաշվարկված տոկոսագումարի և վարկի մասնակի մարման գումարի վճարման համար,

2.2.5 վարկի տրամադրումից հետո առաջացած այլ հանգամանքներ, օրինակ՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետևանքներով, որոնք հնարավոր չէր կանխատեսել:

3. Տրամադրված վարկերի պայմանների վերանայման չափանիշները

Վարկերի մասնակի մարման ժամանակացույցը և /կամ/ վերջնական մարման ժամկետները կարող են վերանայվել հետևյալ բոլոր պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

3.1 վարկառուն չունի ժամկետանց պարտավորություններ ՈւՎԿ-ի և այլ բանկերի /վարկային կազմակերպությունների/ հանդեպ,

3.2 համապատասխան գրավի առկայություն՝

- անշարժ գույքի, դրամական միջոցների գրավադրմամբ կամ պետական բյուջեի երաշխիքով տրամադրված վարկերի համար պահպանելով վարկի վերանայման պահին ՈւՎԿ-ի ներքին կարգերով սահմանված «վարկի գումար»/«գրավի գնահատված արժեք» հարաբերակցությունը (հաշվի առնելով նաև

արտարժույթով տրամադրված վարկերի «վարկի գումար»/«գրավի գնահատված արժեք» հարաբերակցության աճը՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով),

- այլ գրավի դեպքում տրամադրված վարկերի համար «վարկի մնացորդ»/«գրավի գնահատված արժեք» հարաբերակցությունը պահպանելով առավելագույնը 50%, անկախ վարկի տրամադրման պահին տվյալ հարաբերակցության մեծությունից:

4. Տրամադրված վարկերի տոկոսադրույքների, վարկի գումարների վճարման գրաֆիկի և վերջնական մարման ժամկետների վերանայումը

4.1 ՈւՎԿ-ն կարող է վերանայել տրամադրված վարկերի տոկոսադրույքները՝ ելնելով շուկայում տիրող իրավիճակից (գործող տոկոսադրույքների փոփոխություն, մրցակցություն):

4.2 ՈւՎԿ-ն կարող է երկարաձգել տրամադրված վարկերի մարման ժամկետները առավելագույնը վարկի սկզբնական ժամկետի չափով, ընդ որում մեկ վարկի գծով վարկառուի կողմից նոր (փոփոխված) ժամանակացույցով ամսական (կամ այլ ֆիքսված ժամանակահատվածում) մարման ենթակա գումարը պետք է կազմի հին ժամանակացույցով նախատեսված պարբերական վճարների առնվազն 20%-ը:

5. Տրամադրված վարկերի վերանայման գործընթացը

5.1 Տրամադրված վարկերի վերանայման գործընթացը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից՝

5.1.1 Հաճախորդի/վարկառուի/ կողմից վարկի պայմանների վերանայման հայտի ներկայացում՝ նշելով վերանայման պատճառները:

5.1.2 Կապված վարկառուի կազմակերպչաիրավական ձևից և վերանայման պատճառներից, վարկառուի կողմից վերանայումը հիմնավորող և դրա հետ առնչվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում ՈւՎԿ-ի (նոր տեղեկանքներ աշխատավարձի, եկամուտների, դեբիտորական պարտքերի, հարկերի գծով պարտքերի մասին, գործընկերների հետ նոր պայմանագրեր և այլն):

5.1.3 Սույն կարգով նախատեսված պայմաններին համապատասխանելու և Վարկային կոմիտեի դրական նախնական որոշում կայացնելու դեպքում վարկերի պայմանների վերանայման քննարկում և համապատասխան որոշման կայացում ՈւՎԿ-ի կողմից:

5.1.6 Տրամադրված վարկերի պայմանների վերանայում:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն կարգի իմաստով մեկ վարկի գծով վերանայումը թույլատրվում է միայն մեկ անգամ, իսկ վարկի վերջնական մարման ժամկետի երկարաձգումը՝ առավելագույնը սկզբնական ժամկետի չափով, բայց ոչ ավելի քան 36 ամսով:

6.2 Սույն կարգի իմաստով վերանայման պահից նոր ժամանակացույցով նախատեսված երկու հաջորդական մարման ընթացքում վարկը դասակարգվում է ոչ ստանդարտ, եթե ավելի խիստ դասով դասակարգելու հիմքեր առկա չեն: Նշված ժամանակաշրջանի՝ երկու հաջորդական մարման ընթացքում վարկառուի կողմից նոր ժամանակացույցին համապատասխան պարտավորությունների պատշաճ կատարման դեպքում վարկի հետագա դասակարգումն իրականացվում է՝ հիմք ընդունելով վարկի մարման նոր ժամանակացույցը: Ավելի բարձր (բարելավված) դասով դասակարգելու պահին վարկը պետք է բավարարի համապատասխան դասի ակտիվի համար «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»-ով սահմանված չափանիշներին:

6.3 Սույն կարգի պահանջների համաձայն վերանայված վարկերը դասակարգվում են ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համատեղ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»-ով սահմանված օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների հիման վրա և դասակարգման տեսանկյունից չեն դիտվում որպես վերանայված պայմաններով վարկեր, բացառությամբ սույն կարգի 6.2 կետում նշված ժամանակաշրջանի:

6.4 Սույն կարգի իմաստով վարկերը կարող են վերանայվել, եթե վարկառուին տրամադրված վարկը գտնվում է ստանդարտ կամ հսկվող կարգավիճակում:

6.5 Սույն կարգի իմաստով տրամադրված վարկերի պայմանների վերանայումների հետ կապված ՈւՎԿ-ի ներքին իրավական ակտերով այլ բան սահմանված լինելու դեպքում գործում են սույն կարգի դրույթները:

6.6 Սույն կարգը հաստատվում է ՈւՎԿ-ի Խորհրդի կողմից: Ուժը կորցրած ճանաչել «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ խորհրդի կողմից 29.05.2014թ. հաստատված ««ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից տրամադրված վարկերի պայմանների՝ ի օգուտ վարկառուի վերանայման կարգ»-ը:

6.7 Սույն կարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ՈւՎԿ-ի Խորհրդի որոշմամբ: